Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

399 Լուս.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՂՆԱՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՅԵՎ ՊՂՆԱՁԻ ՈՒ ՊՂՆԱՁՄՈԼԻՐԴԵՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

ՀԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ՀԱԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ
1933 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՅԵՐԵՎԱՆ—1933

338.4:669.3(47.925)

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՑԵՎ ՊՂՆՁԻ ՈՒ ՊՂՆՁԱՄՈՒԼԻՖԴԵՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

38

29044

ՀԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՑԵՎ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ
1933 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

A II/19810

ՀԱ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵԵՐԵՎԱՆ—1933

Գեղարքունի Տպարան

Գլավլիտ № 9279 (բ), Պատվեր № 2466, Տիրաժ 1000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՑԵՎ ՊՂՆՁԻ ՈՒ ՊՂՆՁ-ՄՈՒԼԻԲԴԵՆԱՑԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

(ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀՍԽՀ Ժողկոմխորհի
1933 թվի դեկտեմբերի 3-ի վորոշումը)

ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Հայաստանի Ժողկոմխորհը, լսելով Մանր Արդյունաբերության Ժողկոմատի և Գլավցվետմետի հատուկ եքսպեդիցիայի զեկուցումներն ու յեղրակացությունները Հայաստանի պղնձամոլիբդենային ու անակային հանքավայրերի հետաղոտման և Զակցվետմետ տրեստի ու նրա ձեռնարկությունների աշխատանքների մասին, վորոշում են՝

Մատնանշելով այն մեծ աշխատանքը, վորը կատարել է եքսպեդիցիան տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունների հետ միասին, վորոնք բարձրացրել են Հայաստանի պղնձարդյունաբերության ծավալման հետ կապված հարցերը, Կենտկոմը և Ժողկոմխորհն ամբողջովին հավանություն են տալիս եքսպեդիցիայի աշխատանքին և նրա առաջադրած յեղրակացություններին։

ՀԱՆՔԱՅԻՆ ԲԱԶԱՅԻ ՄԱՍԻՆ

1. *ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ՀՍԽՀ Ժողկոմխորհը դրտնում են, վոր Հայաստանի ընդերքում գտնվող զունավոր մետաղների ռեսուրսները դեռ բավականաչափ չեն հետախուզվել և չեն ուսումնասիրվել։ Անցյալ տարի-*

ների Զակգեոլտբեստի և Զակցվետմետի կատարած հետախուզումները բնավ չեն համապատասխանում իրենց նպատակին։ Մատնանշել, որ յերկրաբանական վորոնումները և հետախուզական աշխատանքները համապատասխան չափով զարգացվելու դեպքում, միանգամայն հավանական է, որ Հայաստանում յերևան կբերվեն գունավոր մետաղների հանքային նոր, զգալի բաղաներ և կընդարձակվեն գոյություն ունեցողները։

Հայաստանում հայտարերված պղնձահանքային բազայի վիճակի վերաբերմամբ պետք է մատնանշել, որ Հայաստանի և ԱՍՖՍՀ-ի յերկրորդ և յերրորդ հնգամյակների համար պլանավորված պղնձարդյունաբերությունը պատշաճ մակարդակի վրա պահպանելու և ե՛լ ավելի զարգացնելու համար, անհրաժեշտ է՝ ի լրացումն այժմ աշխատող Զանգեզուրի ու Ալլահվերդու կոմբինատների հանքավայրերին, ուժեղ թափով ներգրավել արտադրության մեջ պղնձի բովանդակությամբ աղքատ (0,5—0,6 տոկոս), բայց իրենց պաշարով շատ խոշոր (ավելի քան 700 հազար տոննա) պղնձի պորֆիրային հատիկային հանքերը, ինչպիսին են Ա-դարակ և Փիրդոուդանը։

Հատկապես այդ տիպի հանքավայրերի արդյունաբերական յուրացումը հնարավորություն կտա վոչ միայն հասցնելու պղնձի ծուլումը տարեկան մինչև 20—25 հազար տոննի, այլև կտա Միությանը մեջ այնքան դեֆիցիտային մոլիբդենի՝ զգալի քանակությամբ։

2. Ընդունել ի գիտություն եքսպեդիցիայի այն առաջարկումը, թե Զանգեզուրի և Ալլահվերդու կոմբինատների հանքավայրերում մինչև 1933 թ. վերջերը

յերևան բերված պղնձահանքային բաղայի հետախուզված պաշարի ABC կատեգորիան կազմում է 34 հազար տոննա և C_2 կատեգորիան՝ 31·300 տոննա պղինձ։

Իսկ պղնձի պորֆիրային հանքավայրերը համապատասխանորեն պարունակում են՝ ABC_1 կատեգորիան՝ 347,2 հազար տոննա և C_2 կատեգորիան՝ 412,8 հազար տոննա պղինձ։

Հանքավայրերի այդ յերկու հիմնական խմբերում պղնձի ընդհանուր պաշարների հարաբերությունը՝ 65·300:760·000, միանգամայն համոզիչ կերպով ապացուցում են, վոր վերին աստիճանի անհրաժեշտ է վոչ միայն ավարտել Աղարակում կատարվող մանրամասն հետախուզումները, այլև սկսել կիսագործարանային փորձեր կատարել Աղարակի հանքերը հարստացնելու և մոլիբդենը պղնձից բաժանելու ասպարիզում։ Հանքավայրի տիպը հնարավորություն է տալիս հեռանկարային պաշարները արագորեն փոխարկելու ավելի բարձր կատեգորիաների։

Վերոհիշյալի հիման վրա, ընդունել, վոր ժամանակն է ստեղծել Աղարակշինը, մի կազմակերպություն, վորը պետք է պատասխանատու լինի հետախուզումներն ամենաարագ կերպով ավարտելու, հանքավայրում հարստացուցիչ գործարան կառուցելու, ավտոճանապարհներ անցկացնելու, մոլիբդենի տեխնոլոգիկ յուրացման գիտա-հետազոտական աշխատանքներն արագացնելու համար և այլն։

3· Աղարակի ու Փիրդուդանի ժողովրդական-տնտեսական հսկայական նշանակություն ստացող մանրամասն հետախուզական աշխատանքներն ավարտելու և

Ազարակի ձեռնարկությունների նախագծումը 1935 թ. սկսելու հնարավորություն ստեղծելու նպատակով, խնդրել Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին՝ 100 տոկոսով ապահովել այդ հանքավայրերի 1934 թ. հետախուզական աշխատանքների պլանի կատարումը՝ անհրաժեշտ վարկերի գծով, մեքենայացման միջոցներով, բանվորական կադրերի ներգրավման, լաբորատորիայի աշխատանքի գծով, ինչպես և Ազարակի ու Փիրդուդանի հետ կապված բոլոր գիտա-հետազոտական աշխատանքների ավարտման գծով։

Հաստատել այդ վայրերի 1934 թ. հետախուզական աշխատանքների այն պլանը, որը մշակել է Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի եքսպեդիցիան։

4. Անհրաժեշտ համարել Ազարակի հանքերի հարստացման վերաբերյալ «Մեխանոբրի» վերջին տվյալներն ստանալուց հետո, ձեռնարկել Ազարակի ապատաս հանքահորերի և հարստացուցիչ գործարանի արդյունաբերական առաջադրանքների մշակմանը, իսկ 35 թվին, 34 թ. հետախուզումներն ավարտելուց հետո, Ազարակի փորձնական հարստացուցիչ գործարանի աշխատանքի արդյունքների հիման վրա, սկսել Ազարակչինի տեխնիկական նախագծի մշակումը։

5. Զանգեզուրի և Ալլահվերդու կոմբինատների հանքավայրերի նկատմամբ ընդունել, որ նրանց հանքային բաղան ժամանակին չնախապատրաստելու հիմնական պատճառները հետևյալներն են՝

ա) Թերագնահատվել են հեռանկարային խորը հետախուզումները, որոնք Ալլահվերդու և Զանգեզուրի նման հանքավայրերի համար միակ ուղին են հանդի-

սանում ժամանակին հետախուզված պաշարներ կուտակելու համար.

բ) հանքավայրերի հետախուզության գիտական ղեկավարումն ունեցել է եպիզոդիկ բնույթ և հետախուզման նյութերը ժամանակին չեն մշակվել կոմբինատների լեռնա-հետախուզական բյուրոներում ու կենտրոնում: Հանքավայրերի կառուցվածքը ժամանակին չի պարզվել.

գ) թերագնահատվել են լայն հիմքերի վրա դրված յերկրաբանական վորոնումներն այնպիսի մթնոլորտում, յերբ բացահայտորեն գերագնահատվել են հանքի պաշարները և նրանց վորակը շահագործվող հանքավայրերում.

դ) բավականաչափ ուշադրություն չի նվիրվել հետախուզման աշխատանքների մեքենայացմանը և անտեսվել են հետախուզության ամենաժամանակակից ու արդյունավետ մեթոդները (պերֆո-բատորային փորում և այլն).

յե) հանքավայրերն ունեն այնպիսի բնույթ (հանքավայրերի յերակային տիպը), վորը հնարավորություն չի տալիս հեռանկարային պաշարներն արագորեն փոխարկելու մանրամասնորեն հետախուզված ու նախապատրաստված պաշարների:

Այդ հանգամանքների հիման վրա, միանգամայն անհրաժեշտ համարել ուժեղացնել Զանգեզուրի, Ալահվերդու և այդ շրջանների այլ հանքավայրերի հետախուզումները, գլխավորապես դեպի հանքերի խորքը, ղեկավարվելով յերկրաբանական — տեխնիկական և գենետիկ այն սխեմաներով, վորոնք տվել է Ծանր Ար-

դյունաբերության ժողկոմատի եքսպեդիցիան այդ հանքավայրերի համար։ Նպատակահարմար համարել և հաստատել հետախուզումների այն ծրագիրը, որը մշակել է եքսպեդիցիան և որը համաձայնեցված է կոմբինատների լեռնա-հետախուզական բյուրոների հետ։

Առաջարկել կոմբինատներին և տրեստին՝ միջոցներ գտնել այդ ծրագրերը 1934 և 1935 թվականներին հարյուր տոկոսով կատարելու համար, գործադրելով հետախուզումների ու վերոնումների ասպարիզում առաջարկված բոլոր մեթոդները։

6. Նկատի առնելով, որ Ադարակի և Փիրդուղանի հետախուզական աշխատանքների պայմանները և առաջիկա շահագործման խնդիրները պահանջում են արդեն 1934 թ. ստեղծել լավ ավտո-ճանապարհներ ու յերկաթուղի, առաջարկել Հայճանտրանսին՝ ուժեղացնել դեպի Ադարակ ու Փիրդուղան տանող խճուղիների կառուցումը։ Կարճևան—Ադարակ խճուղու կառուցումն ավարտել մինչև 1934 թ. մարտի մեկը։

Խնդրել Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատին՝ վերանայել Միլևան—Ջուլֆա ճանապարհի կառուցման պլանն ու ժամկետները, աչքի առաջ ունենալով Հայաստանի գունավոր մետաղաձուլման հասունացած խնդիրները և տեղական թեթև արդյունաբերության կարիքները։

7. Այն հանքավայրերի նկատմամբ, որոնք պարունակում են հազվադյուտ և ազնիվ մետաղներ (վոլֆրամ, պլատին, անակ, մոլիբդեն և այլն), անհրաժեշտ համարել ուժեղացնել հետախուզումները՝ նրանց ար-

դյունաբերական պաշարը պարզելու նպատակով։ Դրա հետ միասին, ուժեղացնել գիտա-հետազոտական աշխատանքն այդպիսի հանքավայրերի (Շամլուղ, Ախթալա և այլն) հանքերից այդ մետաղները ստանալու տեխնոլոգիան պարզելու նպատակով։ Ծրագիր ուրվագծել՝ ստուգելու պլատինի ու հազվադյուտ մետաղների նկատմամբ հետաքրքրություն ներկայացնող բոլոր հանքավայրերը՝ հիշյալ մետաղների պարունակման տեսակետից։ Մոլիբդենի նկատմամբ անհրաժեշտ համարել ե՛լ ավելի ուժեղացնել մոլիբդեն վորոնելու աշխատանքները։

8. Նկատի առնելով այն մեծ աշխատանքը, վորը կատարել է Ծանր Արդյունաբերության ծողկոմատի եքսպեդիցիան Հայաստանի դունավոր մետաղների գլխավոր հանքավայրերի պաշարները յերևան բերելու, նրանց հեռանկարները պարզելու, ծագումը և կառուցվածքային առանձնահատկությունները վորոշելու բնագավառում, նպատակահարմար համարել շտապ կարգով հրատարակել Հայաստանի հանքային բազայի հայտարերման բնագավառում Ծանր Արդյունաբերության ծողկոմատի եքսպեդիցիայի մշակած աշխատությունները, վորպես ժողովածու «Հայաստանի մետաղահանքային, մոլիբդենային ու բազմամետաղային բազան 2-րդ հնգամյակում» վերնագրով։

Առաջարկել Հայաստանի Պետհրատին՝ առաջիկա կիսամյակի ընթացքում հրատարակել վերոհիշյալ ժողովածուն, ապահովելով քարտոգրաֆիկ և նկարագրությունների ժամանակին պատրաստումն այդ հրատարակության համար։

9. Անդրկովկասում գունավոր մետաղների հետախուզման աշխատանքների ղեկավարումն ամրացնելու նպատակով, անհրաժեշտ համարել գունավոր մետաղների հետախուզումների ամբողջ գործը հանձնել Զակցվեստմետ տրեստին և այդ հարցը դնել ՀամԿ(բ)Կ Անդրբյուրոյի ու Անդրժողկոմխորհի առաջ։

ԳՈՐԾՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ՀՍՍՀ Ժողկոմխորհն արձանագրում են, որ առաջին հնգամյակում, Հայաստանում գործող պղնձի ձեռնարկություններում, ներդրվել են զգալի դրամարներ (ավելի քան 22 միլիոն), որոնք ծախսվել են լեռնային տնտեսությունն արմատապես վերակառուցելու, ոգային տնտեսությունը և էներգետիկան ուժեղացնելու վրա, ինչպես և նոր ձեռնարկությունների շինարարության վրա (Զանգեզուրի հարստացուցիչ գործարանը, Ալլահվերդու պղնձաձուլարանը և այլն), որոնք զգալի չափով ուժեղացրին գործող ձեռնարկությունների տեխնիկական զինվածությունը։

Սակայն այդ հիմնական ներդրումները պատշաճ արդյունք դեռ չեն տվել։ Ավելին՝ պղնձի ձուլումը Զակցվեստմետ տրեստում մինչև այժմ էլ չի հասել մինչ-պատերազմյան մակարդակին, իսկ պղնձի միջին ամսական ձուլումը 1933 թվականին նվազել է համեմատած 1932 թ. հետ (247 տոնն՝ 319 տոննի դիմաց)։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ՀՍՍՀ Ժողկոմխորհն առանձնապես մատնանշում են Ալլահվերդու կոմբինատի աշխատանքի միանգամայն անբավարար ցուցանիշները։ Զակ-

ցիկոմների գործող ձեռնարկությունների աշխատանքի տյուրքան անհանդուրժելի արդյունքը չի կարելի արդարացնել այն պատճառաբանություններով, թե անբավարար և յեղել տեխնիկական մատակարարումը, թույլ և յեղել 1933 թ. առաջին կիսամյակում ֆինանսավորումը և վորակով անբավարար են յեղել նախագծերը։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ՀՍՍՀ Ժողկոմխորհը գտնում են, վոր արտադրական պլանների թերակատարման հիմնական պատճառները հետևյալներն են՝

ա) տրեստը և կոմբինատները, ինչպես նաև Զանգեզուրի ու Ալլահվերդու կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները չեն կարողացել ժամանակին ու լրիվ կենսագործել կուսակցության ու կառավարության՝ Դոնբասին և յերկաթուղային տրանսպորտին վերաբերյալ դիրեկտիվները.

բ) միանգամայն անհանդուրժելի յե աշխատանքի կազմակերպումն Ալլահվերդու և Զանգեզուրի ձեռնարկություններում, չկա աշխատանքային ամուր կարգապահություն և խախտվում է միանձնյա ղեկավարման սկզբունքը.

գ) միանգամայն անբավարար է հիմնական շինարարության ստորաբաժանումում կատարվող աշխատանքը, վորի հետևանքն է յեղել արդյունաբերական ու բնակարանային շինարարության բոլոր ժամկետների բաղմանվազ խախտումը և շինարարության առանձին ոբյեկտների վերադարձ կապի խղումը.

դ) կոմբինատների և Զակցվենտմետ տրեստի վարչական — տեխնիկական ղեկավարությունն անզոր և

գանվել տեխնիկական մատակարարման հարցերում, ինչպես նաև Ալլահվերդու ու Զանգեզուրի կոմբինատների առանձին ողակների միջև տարբական կապ պահպանելու բնագավառում.

զ) գոյություն են ունեցել վատառողջ փոխհարաբերություններ Ալլահվերդու կոմբինատի ղեկավարության և տեղական կազմակերպությունների միջև.

ե) միանգամայն անբավարար հիմքերի վրա չի դրվել աշխատավորների կուլտուրական-կենցաղային սպասարկումը և անբավարար է չեղել կուսակցական-մասսայական աշխատանքը չերկու կոմբինատներում էլ։

Հայաստանի պղնձի ձեռնարկությունների աշխատանքը վճռարար բարելավելու և Հայաստանի կենտրոնական որդանների կողմից (Առողջապահական ժողկոմատ, Մատժողկոմատ, ՀԱՄԽ և այլն) այդ ձեռնարկություններին ցուցաբերվող սպասարկման գործում անհրաժեշտ բեկում ստեղծելու նպատակով, ՀԿ(բ)Կ կենտկոմը և ՀՍԽՀ-ի ժողկոմխորհը վորոշում են՝

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Առաջարկել Զակցվետմետին՝ ամենաուշը մինչև 1934 թ. հունվարի մեկը նախագիծ կազմել Լենինյան և Շահումյան հանքավայրերում կուտակված հանքաքարերի փոխադրելու և մշակելու համար, նախապես հաշվառման յենթարկելով դրանք, ուշի-ուշով ստուգման յենթարկելով՝ ու փորձելով նրանց հարբստացման ունակությունը։

2. Զանգեզուրի ու Ալլահվերդու ձեռնարկությունների համար մշակված բոլոր նախագծերը և գրբ-

խավոր պլանները քննել ու հաստատել ամենաուշը մինչև 1934 թ. հունվարի մեկը։

3. Զանգեզուրի ու Ալլահվերդու կոմբինատների հիմնական պլանները և շինարարության ավարտման պլանը՝ վերակառուցման բոլոր օբյեկտներն իրար շաղկապող տեխնիկական–տնտեսական հաշվարկումների հետ միասին, ներկայացնել Գլավցվետմետին ի հաստատություն՝ ամենաուշը մինչև 1934 թ. ապրիլի մեկը։

Տեխնիկական–տնտեսական հաշվարկումները կազմելիս, ուշի–ուշով քննել և վերահաշվարկել արդեն գոյություն ունեցող առանձին նախագծերը, ստուգելով, թե վորքան են համապատասխանում դրանք շինարարության փոխված պայմաններին։

Տրեստի քննած ու հաստատած նախագծերի ցուցակը ներկայացնել Գլավցվետմետին։

4. Անհապաղ ձեռնամուխ լինել մշակելու եքսպեդիցիայի նյութերում մատնանշված պակասող աշխատանքային գծանկարներն ու նախագծերը և ավարտել նրանց մշակումն ու հաստատումն ամենաուշը մինչև շինարարությունն սկսվելը։

Կտրականապես արգելել շինարարություն կատարել առանց հաստատված նախագծերի և արտադրական նախահաշիվների։

5. Բոլոր նախագծային աշխատանքները կատարելու համար, ամենաուշը մինչև 1934 թվականի հունվարի մեկը Զանգեզուրի կոմբինատում կազմակերպել նախագծային բյուրո, վորը պետք է յենթարկվի լինի կոմբինատի շինարարության պետին։ Գիպրոցվետ-

մեռին առավելագույն ժամանակություն ցույց տալ տրեստին բյուրոյի կազմակերպման գործում՝ տրամադրելով անհրաժեշտ նախագծային նյութեր ու տեխնիկական վորակյալ ուժեր, գործուղելով մշտական աշխատանքի ամենաուշը մինչև 1934 թ. հունվարի մեկը հետևյալ մասնագետներին՝ տրանսպորտային ինժեներ, ջրմուղի ինժեներ և տրանսպորտային ինժեներ՝ Սլյահվերդու կոմբինատի համար:

6. Զանգեզուրի կոմբինատում՝ ա) ամբողջովին ավարտել ֆլոտացիոն գործարանի շինարարությունն ամենաուշը՝

Շահումյանի սեկցիան . . . . . 1934 թ. մարտին
Լենինի » . . . . . 1934 թ. ապրիլին
Լենինի հանքախմբի 2-րդ սեկցիան . . . 1934 թ. մայիսին

բ) Շահումյանի անվան հանքախմբի սեկցիան և Լենինի հանքախմբի մի սեկցիան գործարկել 1934 թ. մարտին և ապրիլին:

Լենինի հանքախմբի յերկրորդ սեկցիան գործարկել հանքերի անհրաժեշտ պաշար կուտակվելուն զուգընթաց:

գ) Հիմնական շտոլնայում մի գարնի ընթացքի առավելագույն արտադրությունն ընդունել ամիսն առնվազն 50 մետր: Գլխավոր շտոլնայի առանձին մասերն ավարտել հետևյալ ժամկետներում՝ շտոլնայի հարավային մասի միացումը № 1 հանքահորի հետ ավարտել ամենաուշը մինչև 1934 թ. մայիսի մեկը:

Զեռնարկել № 3 հանքահորի չորացմանը և ավարտել մինչև 1934 թ. մայիսի մեկը:

№ 3 հանքի հետ միացումը ավարտել ամենաուշը մինչև 1934 թ. մայիսի մեկը։

№ 6 հանքի խորացումն ավարտել ամենաուշը մինչև 1935 թ. հունվարի մեկը։

Գլխավոր շտոլնայի փորումն ու ամրացումն ավարտել ամենաուշը մինչև 1935 թ. փետրվարի 1-ը։

դ) Անհապաղ ձեռնարկել Լենինի հանքախմբի հանքերի մակերևույթին տրանսպորտի Գլավցվետմետի նախագծի համաձայն վերակառուցելու գործին և ավարտել այդ աշխատանքն ամենաուշը մինչև 1934 թ. մայիսի մեկը։

յ) Թե հարստացուցիչ գործարանը և թե այլ օբյեկտների մյուս բոլոր աշխատանքներն ավարտել եքսպեդիցիայի սահմանած ժամկետներին և Գլավցվետմետի հաստատած աշխատանքային պլանի համաձայն։

7. Ալմահվերդու կոմբինատում արտացոլիչ հնոցի և կոնվերտորային ցեխի կառուցումն ավարտել այնպիսի հաշվով, որ նրանք գործարկվեն ամենաուշը մինչև 1934 թ. սեպտեմբերի մեկը։

ը) Պղնձաձուլարանի, ներառյալ նաև էլեկտրան (նախնական այրման) ցեխի, ամբողջ շինարարությունն ավարտել ամենաուշը մինչև 1935 թ. հունվարի մեկը։

դ) Հաստատել հիմնական օբյեկտների շինարարության համար, եքսպեդիցիայի կողմից սահմանած ժամկետները։

8. Բնակարանային-կոմունալ շինարարության առաջադրում՝

ա) մատնանշելով բնակշինարարության անբավարար վիճակը, կառուցված և կառուցվող տներում բան-

փոքրների ու ինժեներո-տեխնիկական աշխատողների համար մի շարք տարբական հարմարություններ չլինելը, հանձնարարել Զակցվետմետին՝ քննել ու հաստատել տեղական պայմաններին ամենից ավելի համապատասխանող բնակելի տների 2—3 տիպ, աչքի առաջ ունենալով, վոր անհրաժեշտ ե առավելագույն չափով եժանացնել շինարարությունը և հետագա շինարարությունը կատարել բացառապես այդ նախագծերով։

բ) կոմբինատների դիրեկտորների անձնական պատասխանատվությամբ, ամենաուշը մինչև դեկտեմբերի 25-ը համապատասխան ձեռնարկումներ մշակել բոլոր կառուցված տները կարգի բերելու համար, և այդ ձեռնարկումները կենսագործել ամենաուշը մինչև 1934 թ. մայիսի մեկը։

9. Կոմբինատների դիրեկտորների անձնական պատասխանատվությամբ՝

ա) ամենաուշը մինչև դեկտեմբերի 15-ը յուրաքանչյուր կոմբինատների շինարարությունն առանձնացնել վորպես ինքնուրույն վարչություններ և նշանակել շինարարության վարչության պետեր ու գլխավոր ինժեներներ։

Շինարարական բաժինների կազմակերպումը կատարել Ծանր Արդյունաբերության ժողկոմատի հրամանի համաձայն։

բ) Շինարարությունն առանձնացնելիս, ստեղծված վարչություններն ապահովել համապատասխան տրանսպորտով, սպահեստային տնտեսությամբ, մատակարարմամբ, հաշվապահությամբ ու կադրերով։

10. Նշելով շինարարության բարձր ինքնարժեքը և նախահաշվի նկատմամբ տեղի ունեցած դղալի դերածախսը, առաջարկել տրեստի վարչությանը և կոմբինատների դիրեկտորներին՝ անհապաղ վճռական միջոցներ ձեռք առնել շինարարության արժեքն եժանացնելու համար։

11. Զակցվեստեսի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ հիմնական շինարարության հաշվետվության վիճակն անբավարար է և առաջարկել տրեստին՝ ամենաուշը մինչև դեկտեմբերի 15-ը, ներկայացնել շինարարության հաշվետվությունը առ 1-ը դեկտեմբերի 1933 թ. (ձև № 13)։

12. Վերոհիշյալ բոլոր աշխատանքները կատարելու և շինարարության սահմանված ժամկետներն ապահովելու համար, խնդրել Գլավցվետմետին՝ 1934 թվականին Զակցվետմետին բաց թողնել 15 միլիոն ռուբլի հիմնական շինարարության համար (առանց Աղարակի), որից հետախուզումների համար 4 միլիոն և բնակարանային ու կոմունալ շինարարության համար 2 միլիոն ռուբլի, ընդվորում խստիվ պարտավորեցնել կոմբինատների դիրեկտորներին աշխատանքի համար սահմանված արժեքից դուրս չգալ։

13. Խնդրել Գլավցվետմետին՝ 1934 թ. ընթացքում Զակցվետմետին բաց թողնել 500 հազար ռուբլի՝ անհատական-բնակարանային շինարարությունը վարկավորելու համար։

14. Պարտավորեցնել Հայճանտրանին՝ արագացնել Շահումյանի հան[illegible] տանող խճուղու կա-

A 19810

ուսումը, ավարտելով վերջինս ամենաուշը մինչև 1934 թ. փետրվարի մեկը։

15. Նկատի առնելով շինարարության ուրվագծված պլանների և ժամկետների բազմանվազ խախտումը, նախազգուշացնել Զակցվետմետին, կոմբինատների դիրեկտորներին, շրջկոմների քարտուղարներին և շրջգործկոմների նախագահներին, վոր շինարարության ուրվագծված ժամկետները վերջնական են և այդ ժամկետները խախտելու համար նրանք կենթարկվեն խիստ պատասխանատվության։

Բ. ԼԵՌՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՊԱՐԻԶՈՒՄ

1. Հաստատել 1934 թ. հանքաքարի հանույթի համար եքսպլուատացիայի ուրվագծված պլանին, այն է՝

Ալլահվերդու հանքավայրում	18.000	տոննա
Շամլուղի »	50.000	»
Զանգեզուրի Լենինյան հանքերում	103.000	»
Շահումյան հանքերում	18,750	»

2. Անհապաղ արագացնել լեռնային նախապատրաստական աշխատանքները բոլոր հանքերում։

1934 թ. լեռնագործական նախապատրաստական ու հիմնական աշխատանքների պլանը կազմել այնպիսի ծավալով, վոր տարվա վերջին հանքերն ունենան նախապատրաստված պաշար առնվազն մի տարվա համար, յելնելով Զանգեզուրի Ֆլոտացիոն գործարանի և Ալլահվերդու պղնձաձուլարանի լիակատար արտադրականությունից։

Մասնավորապես Շամլուղի հանքերում նախապատրաստման ու մանրամասն հետախուզման աշխատ-

տանքը պետք է կատարվի այնպիսի հաշվով, որ 1934 թվի առաջին յեռամսյակի վերջերին շահագործման հանձնվի «Մայիսի մեկը» շտոկը, իսկ 1934 թ. փետրվարին՝ № 6 շտոկը:

3. Անհապաղ կարգի բերել հանքային տնտեսությունը՝ հանքատար ուղիները, ոգախողովակները, մեխանիզմները, էլեկտրական ասրքերը, մարդկանց ուղիները և այլն:

4. Պարտավորեցնել Ալլահվերդու կոմբինատի դիրեկտորին՝ գործի դնել նրա տրամադրության տակ գտնված բուր-սարքավորման դաղդյահները մինչև 1934 թ. հունվարի մեկը:

5. Պարտավորեցնել կոմբինատներին՝ ձեռք առնել բոլոր միջոցները լիովին և ժամանակին ապահովելու ընթացիկ ու պլանային նախապդուշացուցիչ նորոգման կատարումը:

6. Պարտավորեցնել՝ հանքերի վարիչներին ամենուրեք մինչև դեկտեմբերի 15-ը կարգի բերել ու ռացիոնալ կերպով ոգտագործել տեղային տնտեսությունը:

Ավելի ուժեղ վերահսկողություն սահմանել հանքաքարը ուղարկվելիս ու փոխադրվելիս ըստ վորակի բաժանելու գործի վրա և մշակել հանքի վորակի համար հանքերը պարզևատրելու սիստեմ:

Հաշվառման յենթարկել հանքաքարում պարունակվող պղնձի քանակը հանքերում ու գործարանում և յուրաքանչյուր ամիս պարզել տարբերության չափը:

Հանքի գնահատումն ըստ վորակի կատարել լաբորատորիայի տվյալների համաձայն:

8. Զանգեզուրի կոմբինատում կազմակերպել մարկշեյդերային բյուրո հետևյալ կազմով՝ մի ինժեներ մարկշեյդեր, 2 մարկշեյդեր տեխնիկ և մի գծագրող։ Կատարման ժամկետը սահմանելով 1934 թ. հունվարի մեկը։

Առանց բացառության բոլոր լեռնային աշխատանքների գծագրերը ամեն ամիս, վորպես կանոն, լրացնել տեղագրական աշխատանքով կատարվող փոփոխություններով։

9. Լուծարքի յենթակա հանքահորերը, վորպես կանոն, պետք է նախապես յենթարկվեն դոկումենտացիայի։

Իսկ լուծարքը պետք է կատարվի համապատասխանորեն ձևակերպված փաստաթղթով ու փաստարկումներով։

10. Առաջարկել Զանգեզուրի կոմբինատին՝ 20 խորանարդ մետր կարողություն ունեցող կոմպրեսորը սարքել և գործարկել 1934 թ. առաջին կիսամյակում։

11. Առաջարկել կոմբինատներին՝ հանքի մակերեսային տրանսպորտի այն վայրերում, վորտեղ հնարավոր է, ձիաքարշ փոխադրումից անցնել բենզինաքարշ փոխադրության։

12. Առաջարկել կոմբինատներին՝ գործարանների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով, տարվա սկզբին հանքի փոխադրման պլանը կազմել այնպիսի հաշվով, վոր տարվա առաջին կիսին վորոշ պաշար կուտակվի վերամշակման վայրից վոչ հեռու գտնվող միջանկյալ պահեստարաններում։

Գ. ՄԵՏԱՂԱՁՈՒԼՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Հանքաքարում մանրուք շատ պարունակվելու դեմ պայքարելու նպատակով՝

ա) արագացնել այրող ապարատի սարքումը Ալլահվերդում՝ մանրուքի մեծ մասը միաձուլելու համար, այնպիսի հաշվով, որ ձուլման մեթոդի վերակառուցումը՝ ձուլարանում ոգտագործելու համար, ավարտվի մինչև 1934 թ. հունվարի մեկը։

բ) խնդրել Գլավցվետմետից՝ միջոցներ ձեռք առնել, որ Ալլահվերդու գործարանը չտապ կարգով ստանա մի եռդատուստեր, մանրուքն այրելու սարքի համար.

գ) Ղափանում հնոցի աշխատանքը խափանվելու դեպքում, հալեցնել փոքր քանակությամբ շրջադարձ տեղն խորն ընկած փուվածքները հալեցնելու համար։

2. Կավային (Ալլահվերդում) և կայծաքարային (Ղափանում) հանքերի ձուլումը յուրացնելու նպատակով՝

ա) առաջարկել պղնձաձուլական ցեխերի վարիչներին՝ սիստեմատիկ վերահսկողություն սահմանել հալոցքի փոփոխությունների ու վատերժակետային հնոցների վիճակի վրա և պարզել, թե ինչպիսի կախումը ունի շլակը հանքի պարունակած կավահողից ու կվարցից։ Այդ նպատակով լաբորատորիայից պահանջել պարբերաբար վերլուծման յենթարկել հումքը, ֆլյուսները և ձուլման արդյունքները.

բ) առաջարկել պղնձաձուլական ցեխերի վարիչներին վերոհիշյալ դիտողությունների ու վերլուծումների հիման վրա կատարել գրաղետ շիխտովկա, գոր-

ծաղրելով Ղափանում վորպես Ֆլյուս հին, յերկաթ պարունակող շլակները, նպատակ ունենալով բաժանել նրանից պղինձը։ Դրա համար նախապես ստուգել և ընտրություն կատարել շլաքի հին ատվալների մեջ։

գ) Ղափանում բարելավել կրաքարի տեսակավորումը և մտցնել նրա մանրացումը մինչև 2—2,5 սանտիմետր կտորների՝ կվարցի հետ սերտ կանտակտ ստեղծելու համար։ Այդ նպատակով տասն որում սարքավորել կոմբինատում դոյություն ունեցող քարհատ մեքենան։

դ) առաջարկել Ալլահվերդու կոմբինատի տեխնիկական ղեկավարին, հիմնվելով այն ցուցանիշների վրա, վորոնք վերաբերում են վատերժակետային հնոցների աշխատանքի կախմանը հանքի վորակից, մինչև 1934 թ. հունվարի մեկը մշակել պղնձի վերամշակման արժեքի ու ինքնարժեքի հաշվարկային աղյուսակ, վորոշելով գործարանի նվազագույն պահանջները հանքի վորակի նկատմամբ՝ մանրուքի, կավահողի ու պղնձի պարունակման իմաստով։

յե) առաջարկել Ալլահվերդու կոմբինատին՝ անմիջականորեն իր ձուլած հանքերի շահավետության սահմանները վորոշելուց հետո, հաշվառման յենթարկել պղնձով ավելի աղքատ, դժվար հալվող և մանր հանքերի առկա պաշարը, ինչպես և հին հանքային ատվալների պաշարը և հիմնավորել այն հարցը թե անհրաժեշտ է արդյոք հարստացնել դրանք մշտական, ստացիոնար, թե կամ փոխադրելի հարստացուցիչ գործարաններում։ Այդ հարցն արծարծել Գլավցվետմետի առաջ մինչև 1934 թ. հունվարի մեկը,

մացնելով ստուգիչ թվերի մեջ անհրաժեշտ ծախսերը։

3. Բարձրացնել ցեխի տեխնիկական ղեկավարությունը և մանավանդ վարպետի ու քուրայապանի դերը, պահանջելով նրանցից անմիջականորեն վերահսկել ֆուրմերի ու հալվածքը բաց թողնող անցքերի վրա։ Առաջարկել ցեխի վարիչներին՝ յուրաքանչյուր որ ստուգել հնոցների վիճակը, մերկացնելով հնոցների նաստիլները չիխտը լիցնելով, ինչպես և հսկողության յենթարկել տաքացնող կոլոշների կանոնավոր վիճակը։

4. Դասընթացներ կազմակերպել քուրայապանների վարպետությունը բարձրացնելու համար, կազմելով որացուցային պլան՝ կառավարության տեխմինիմումին վերաբերյալ վորոշումն իրականացնելու համար, ինչպես և գիտական գործուղումներ տալ տեխնիկական կազմին։

5. Առաջարկել կոմբինատների դիրեկտորներին ապահովել գործարաններին անխափան հանքաքար մատակարարելու գործը, կազմելով գործարանում առնվազն յերկու շաբաթվա պաշար, ինչպես և ապահովել ֆլյուսների, գործիքների ու նյութերի մատակարարումը (յերկաթ, ազբեստ և այլն)։

6. Առաջարկել կոմբինատների տեխնիկական ղեկավարներին, հանքերի ու գործարանների աշխատանքի մի ամսվա պլանը կազմելու հետ միաժամանակ, գործարանին ցուցումներ տալ ստացվելիք հանքաքարի մասին, մատնանշելով, թե նրա ծագումը, (հանքախմբի համարը) և թե նրա կազմն ու խոշորությունը։

7. Նոքտրգման յենթարկել Ղափանի պղնձաձուլա-

կան ցեխն այնպիսի չափով, որն անհրաժեշտ է ցեխի ամբողջ տարվա աշխատանքի համար, ուշադրություն նվիրելով քարշային սարքերի վրա, նպատակ դնելով ապահովել նորմալ քաշումը վատերժակետային հնոցներում ու մանրուք ձուլող սարքերում և վերացնել բարակ վոչու կորուստը:

8. Առաջարկել կոմբինատների դիրեկտորներին մինչև 1934 թ. հունվարի մեկը ձեռնարկումներ մշակել ու իրականացնել՝ լաբորատորիայի աշխատանքը վերակառուցելու, նրա արտադրականությունն ավելացնելու, նմուշները ճիշտ վերցնելու և վերլուծումների վորակը բարձրացնելու համար, այնպիսի հաշվով, վոր լաբորատորիան վերահսկի ցեխերի աշխատանքի վրա և ժամանակին տա նրանց այն տվյալները, վորոնք անհրաժեշտ են պրոցեսները կանոնավորելու համար: Ղափանում հատուկ ուշադրություն նվիրել, վոր լաբորատորիան սպասարկի փորձնական ֆլոտացիոն գործարանը:

9. 1933 թ. 4-րդ յեռամսյակի համար պրոպլավը հալեցնելու նորմա սահմանել՝ Ալլահվերդու գործարանում՝ որական միջին հաշվով 180 տոննա, Ղափանի գործարանում՝ 50 տոննա:

10. Անհրաժեշտ համարել, վոր Ղափանի պղնձաձուլարանն աշխատի ամբողջ 1934 թվականի ընթացքում:

Ղափանում ձուլումն այսուհետև ևս պահպանելու նպատակահարմարությունը պարզելու համար, առաջարկել տրեստին մշակել հատուկ վարիանտ վատերժակետներում հալեցնելու համար շարքային հան-

քերից ընտրված, հարուստ, շտուֆային այն հանքը, վորը գնում է Ֆլոտացիոն գործարանը, համեմատել այդ վարիանտը հիմնական նախագծերի հետ (ամբողջ հանքի Ֆլոտացիան և կոնցետրատների ձուլումը Ալլահվերդու արտացոլիչ հնոցում) պղնձի ինքնարժեքի տեսակետից և ամբողջ նյութը, սեփական յեղրակացություններով, ներկայացնել Գլավցվետմետին ամենաուշը մինչև 1934 թ. հուլիսի մեկը։

11. Հանքի վերաբաժանման ինքնարժեքը և պղնձի ինքնարժեքը իջեցնելու համար, բացի գործարանի աշխատանքը բարելավելու վերև մատնանշված ձեռնարկումներից, իրականացնել հետևյալ ձեռնարկումները՝

ա) պարտավորեցնել կոմբինատների տեխնիկական ղեկավարությանը՝ գործարաններին մատնանշել պլանում նախատեսված հանքաքարում պղնձի տոկոսը։ Արտադրական ծրագրի կատարումը հաշվառման յենթարկել վոչ միայն ըստ հանքի քանակի, այլև հանքի պարունակած պղնձի քանակով.

բ) ապահովել գործարանները լավորակ կվարցով։ Մինչոցներ ձեռք առնել մատակարարելու Ալլահվերդու գործարանին Շահալու կվարցը, վորը տալիս է կվարցի խնայողություն։

գ) ճիշտ հաշվառման յենթարկել ելեկտրոներգիան և խիստ տնտեսում մտցնել նրա ծախսման մեջ, ձգտելով ռացիոնալ կերպով ոգտագործել շարժող մեխանիզմները, վերացնելով ոդի մսխման կորուստները և այլն.

դ) բարձրացնել աշխատանքի արտադրականությունը, խտացնելով աշխատանքային ժամանակը,

ուղղակի կախումն մտցնելով վարպետների աշխատավարձի և ծրագիրը բոլոր ցուցանիշներով կատարելու միջև, մտցնելով աշխատանքի պրոդրեսիվ վարձատրություն, պլանը դերակատարելու համար, ինչպես և տեխնիկական կազմի պարգևատրում նատուրայով։

ե) Հարկ յեղած բարձրության վրա դնել սոցմրցման ու հարվածայնության հաշվառումը։

զ) վոչ ուշ քան մինչև 1934 թվականի հունվարի մեկը, կոմբինատների բոլոր ցեխերն անցկացնել տնտ. հաշվարկի, ապահովելով յուրաքանչյուր ցեխի ծախսերի ճիշտ հաշվառումն ու ցեխի վարիչների լիակատար պատասխանատվությունը նյութերի, բանուժի, ելեկտրոնեներգիայի և այլնի դերածախս կատարելու համար. տնտհաշվարկն հասցնել մինչև բրիգադները ապահովելով նրանց տնտհաշվարկի արդյունքների վերաբերյալ ժամանակին յեղրակացություններով, պարգևատրելով նրանց աշխատանքի լավ արդյունքների համար.

ե) առաջարկել կոմբինատների դիրեկտորներին՝ 1934 թվականի հունվարի մեկից վերակազմել դործարանների պահպանության գործը, վորը գոյություն ունեցող սիստեմի պայմաններում չափազանց թանդ է նստում (Ալլահվերդում՝ 80 ռուբլի, Ղափանում՝ 160 ռուբլի—յուրաքանչյուր տոնն պղինձ). կոմբինատների դիրեկտորներին իրավունք վերապահել՝ միլիցիան մասամբ փոխարինելու պահակներով։

թ) ցեխային վարչության և ցեխի բոլոր աշխատողների ուշադրության կենտրոնում դնել պայքարը հանուն ինքնարժեքի ռեժիմի ու ներքին մինչոցների

ու հնարավորությունների հավաքագրման, այդ պլանները հասցնելով մինչև բրիգադները.

ժ) ինքնարժեքի իջեցման համար մղվող պայքարի մեջ ներդրավել բոլոր կուսակցական ու հասարակական կազմակերպություններին, արտադրական խոր հերդակցություններում սիստեմատիկաբար քննության առնելով ինքնարժեքի իջեցման հարցերը:

Հատուկ ուշադրություն նվիրել ռացիոնալիզատորական աշխատանքին ու բանվորական առաջարկներին, նյութապես խրախուսելով դյուտերի ու ռացիոնալիզատորական առաջարկների հեղինակներին.

ի) պարտավորեցնել գլխավոր հաշվապահներին՝ վոչ ուշ քան մինչև հաջորդ ամսի 10-ը, ամենամսյա հաշվետվություններ ներկայացնել տնտեսական բրիգադների աշխատանքի արդյունքների մասին, մատնանշելով ինքնարժեքի տարբերը:

լ) պարտավորեցնել կոմբինատների դիրեկտորներին՝ սիստեմատիկ վերահսկողություն ունենալ ինքնարժեքի իջեցման վերաբերյալ ձեռնարկումների կենսագործման նկատմամբ և ամեն ամիս տեխնիկական խորհրդակցություններում քննության դնել ինքնարժեքի հարցը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Բանուժի կազմակերպված հավաքագրման համար, Ալլահվերդու կոմբինատին ամրացնել Ղարաքիլիսայի, Ստեփանավանի, Ալլահվերդու և Իջևանի շրջանները, իսկ Զանգեզուրի կոմբինատին՝ Ղափանի, Սիսիանի և Գորիսի շրջանները:

2. Մատնանշված շրջաններին դիրեկտիվ տալ, վոր կոլտնտեսությունների հետ պայմանագրական հիմունքներով հավաքագրվող բանուժը հավաքագրվի վոչ պակաս քան մեկ տարի ժամանակով։

3. Պարտավորեցնել շրջգործկոմներին՝ վոչ պակաս քան մեկ տարի ձեռնարկության մեջ աշխատող բանվորներին ու կոլտնտեսականներին, արտադրության մեջ դտնվելու ժամանակամիջոցում, շացի գյուղատնտեսական հարկից ազատելուց, լրացուցիչ կերպով ազատել նաև ճանապարհային ու լծկանային պարհակից։

4. Լեռնային արդյունաբերության համար հավաքագրված բանուժը հաշվի չառնել վորպես բանուժ՝ տրված կոլտնտեսությունների պլաններով։

5. Պարտավորեցնել Հայաստանի Առժողկոմատին՝ ուժեղացնել բժշկական ոգնությունը Ղափանում, վորի համար — 1) վոչ ուշ քան մինչև 1934 թվականի հունվարի մեկը մշտական աշխատանքով Ղափան ուղարկել մեկ վիրաբուժ, մեկ գինեկոլոգ և մեկ ատամնաբուժ. 2) կազմակերպել ատամնաբուժական կաբինետ, 3) Ղափանի մալարիայի դիսպանսերը 1934 թվականի սկզբից վերակազմակերպել ու վերածել Հանրապետական Տրոպիկական Ինստիտուտի բաժանմունքի 20 մշտական մահճակալով, վորպես միասնական կազմակերպության՝ կենտրոնացնելով այդտեղ մալարիայի դեմ մղվող վողջ աշխատանքը, 4) հիվանդանոցն ապահովել 1933 և 1934 թվականների համար անհրաժեշտ միջոցներով, Ղափանի շրջգործկոմի

կողմից ներկայացված նախահաշվի համաձայն, հիվանդանոցը մոցնելով Առժողկոմատի բյուջեյի մեջ։

6. Միջնորդություն հարուցել Համ. Կ(բ)Կ Անդրբյերկոմի ու Անդրժողկոմխորհի առաջ՝ Ղափանի խորհանտեսության շրջանում չալթուկ ցանելն արգելելու վերաբերյալ և առաջարկ անել Զանգելանի շրջկոմին՝ չալթուկի ցանքերի հողամասը տեղափոխել խորհանտեսությունից 5 կիլոմետր հեռավորության վրա։

7. 1934 թվականի համար համապատասխան միջոցներ տրամադրել Ալլահվերդու շրջգործկոմին, վորը բավականացնի շրջանային հիմնարկների համար մի շենք կառուցելուն և դրանով իսկ աղատել այդ հիմնարկների կողմից զբաղեցված կոմբինատին պատկանող բնակելի տարածությունը։

8. Նկատի ունենալով Ալլահվերդու դատարանի մի շարք սխալ վորոշումները, վորոնք չեն ապահովում պայքարը արտադրությունը կաղմալուծողների դեմ, առաջարկել հանրապետական դատախազությանը, վերանայել կոմբինատի գործերի վերաբերյալ 1933 թ. հունվարի մեկից սկսած Ալլահվերդու դատարանի կողմից կայացված բոլոր վորոշումները։

ա) Առաջարկել կոմբինատների դիրեկտորներին՝ վոչ ուշ քան մինչև 1934 թվականի փետրվարի մեկը, արտադնացության վերաբերյալ 1933 թվականի մարտի 17-ի որենքի համաձայն, ձևակերպել ինչպես ձեռնարկության մեջ աշխատող, այնպես և հավաքագրման կարգով նոր յեկած բոլոր բանվորների հետ անհատական պայմանագրեր կնքելը։

բ) բանուժի հավաքագրման ու պայմանագրերի կատարման պատասխանատվությունը դնել ցեխերի ու հանքահորերի վարիչների վրա.

գ) բոլոր նոր ընդունված բանվորներին՝ հանքահորերի ու ցեխերի վարիչների և շրջանային պարետների անձնական պատասխանատվությամբ՝ նրանց դալու առաջին իսկ որվանից ապահովել բնարականներով, անկողիններով, հացի քարտերով ու ճաշարանի կցման տալոններով.

դ) վերաբաշխել վողջ բնակարանային ֆոնդը, առաջատար ցեխերին ամրացնելով նրանց անհրաժեշտ բնակելի տարածությամբ և լավագույն բնակարաններով ապահովելով առաջին հերթին առաջատար ցեխերի հարվածայիններին: Կոմբինատին պատկանող շինքերից հեռացնել արտադրության հետ կապ չունեցող բոլոր մարդկանց:

ե) ցեխերի և հանքահորերի վարիչների և շրջանային պարետների անձնական պատասխանատվությամբ, բանվորական բնակարաններն ապահովել անհրաժեշտ կահկարասիքով ու անկողիններով և մշտական հսկողություն ունենալ բանվորական բնակարանների դրության նկատմամբ: Դեպի բանվորների կենցաղային պայմանները անփույթ ու անուշադիր վերաբերմունք հայտնաբերելու յուրաքանչյուր առանձին դեպքում, խիստ պատասխանատվության յենթարկել հանցավորներին.

զ) Առաջարկել Ալլահվերդու կոմբինատի դիրեկտորին՝ 1934 թվականի առաջին յեռամսյակում ավարտել պաշտպանության տան կառուցումը և նրա

ոգտագործման հաշվին ընդարձակել քանվորների ու տեխնիկական անձնակազմի բնակարանային ֆոնդը։

Ցարդ գործուսի չենքը վերածել ուսումնական կոմբինատի, այնտեղ կենտրոնացնելով բոլոր ուսումնական հիմնարկներն ու ուսանողական հանրակացարանները։ Այդ աշխատանքն ավարտել մինչև դեկտեմբերի 15-ը։ Դրա հետևանքով ազատված տարածությունն ոգտագործել վորպես քանվորական բնակարաններ.

ը) պատասխանատվության յենթարկել գործարանների, պոկոցների և արտադրությունը կազմակերպողների դեմ վճռական պայքար չմղող հանքահորերի ու ցեխերի վարիչներին, հերթափոխության ինժեներներին, վարպետներին, տեխնիկներին և տասնապետներին։ Աշխատանքից հեռացված գործարանների կրկին աշխատանքի ընդունելու համար, քրեական պատասխանատվության յենթարկել հանցավորներին։

թ) հարդելի պատճառներով բանվորներին աշխատանքից ազատելու իրավունքը վերապահել հանքահորերի ու ցեխերի վարիչներին և միայն բացառիկ դեպքում՝ հերթափոխության ինժեներներին ու վարպետներին.

ժ) պարտավորեցնել բարձր, միջին և կրտսեր տեխնիկական անձնակազմին աշխատանքի ներկայանալ մինչև հերթափոխությունն սկսվելը։ Բանուժի բաշխումն ըստ հանքահորերի (զաբոյների) ու ագրեգատների կատարել անմիջականորեն հանքահորերի ու ցեխերի վարիչների և հերթափոխության ինժեներների-վարպետների միջոցով։ Գլխավոր հերթափո-

խություններն ապահովել վորակյալ տեխնիկական ղեկավարությամբ։

խ) առաջարկել ցեխերի ու հանքահորերի վարիչներին վերանայել և կոմբինատների տեխնիկական ղեկավարների հետ միասին տասն որվա ընթացքում մշակել ու կիրառել կյանքում աշխատանքի դուրս գալու հաշվառման կարգը և ներքին կարգապահական կանոնները։

լ) պատասխանատվության յենթարկել տեխնիկական նորմայավորման նկատմամբ անմիջական ոպերատիվ ղեկավարություն ունենալու վերաբերյալ կուսակցության և կառավարության վորոշումներն անտես առնող և այդ աշխատանքն ամբողջապես ցեխային նորմայավորողի վրա գցող ցեխերի ու հանքահորերի վարիչներին ու ցեխերի տեխնիկական ղեկավարներին։

խ) առաջարկել ցեխերին ու հանքահորերի վարիչներին՝ վճռականորեն հրաժարվել իսկական տեխնիկական նորմայավորումը տարիֆային նորմայավորումով ու մերկ իրոնոմետրաժով փոխարինելուց։

Տեխնիկա-նորմայավորական աշխատանքը ծավալել լիակատար կերպով ցեխային նորմայավորման վերաբերյալ տրեստի կողմից, առաջադրված կանոնադրության համապատասխան, այն դարձնելով ցեխում կատարվող վողջ աշխատանքի իսկական բաղան։

ծ) պարտավորեցնել հանքահորերի ու ցեխերի վարիչներին՝ աշխատանքի պայմանները փոխելու յուրաքանչյուր առանձին դեպքում, վորոնք ազդում են բանվորների արտադրողականության մակարդակի վրա,

հավասարեցնել աշխատանքի նորմաները ամրացնելով այն յերկարատև ժամանակով.

կ) կորականապես առաջարկել ցեխերի ու հանքահորերի վարիչներին, հերթափոխության ինժեներներին, տեխնիկներին և տասնապետներին՝ անհապաղ կիրառել այն բոլոր ռացիոնալիստական ձեռնարկումները, վորոնք աշխատանքի սահմանված նորմաների հիմքն են կազմում, իսկ առանց տեխնորմայավորման կողմից մատնանշված կորուստները վերացնելու, աշխատանքի նորմաները կիրառելու համար հանցավորներին յենթարկել խիստ պատասխանատվության.

հ) պարտավորեցնել ցեխերի ու հանքահորերի վարիչներին, քսան որվա ընթացքում կարգավորել բանվորական տեղերը: Նույն ժամանակամիջոցում կարգավորել նաև գործիքային տնտեսությունը և ապահովել բանվորներին ժամանակին գործիքներ մատակարարելը: Անխուսափելի պարապուրդների դեպքում վորակյալ հանքափորներին ոգտագործելու համար ունենալ նախապատրաստված պահեստի տեղեր.

ջ) առաջարկել ցեխերի ու հանքահորերի վարիչներին՝ առավելագույն չափով ընդարձակել բանվորներին տնտեսական բրիգադների մեջ ընդգրկելու գործը: Բրիգադի գեկավարման համար բրիգադիրների համար սահմանված պարգևատրումները վճարել ժամանակին.

ղ) առաջարկել կոմբինատների տեխնիկական գեկավարներին և հանքահորերի ու ցեխերի վարիչներին՝ առավելագույն չափով դիֆֆերենցիացիայի յենթարկել աշխատանքը և կիրառել կյանքում բանվորական

որը խոչընդոտելու բոլոր միջոցառումները։ Մեկ ամսվա ընթացքում վերանայել արտադրության բոլոր այն բնագավառները, որոնք դժվարածանր ոչ են պահանջում, նրանց մեքենայացման նպատակով (բարձելու, փոխադրելու և այլ աշխատանքները)։

ճ) առաջարկել ցեխային վարչություններին՝ ցեխի կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունների հետ միասին՝ բոլոր պայմանները ստեղծել Համկ(բ)Կ Կենտկոմի ու ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի 1933 թվականի ապրիլի 8-ի ու մայիսի 21-ի վորոշումների կիրառումը հոմաճաշ աշխատանքի ու աշխատավարձի վերակառուցումն ամենաարագ կերպով յուրացնելու համար, իսկ վերակառուցման ձեռնարկումները խախտելու կամ նրանց կիրառումը դանդաղեցնելու համար հանցավորներին յենթարկել պատասխանատվության՝ մինչև իսկ աշխատանքից հեռացնելով ու դատի տալով։ Առաջարկել կոմբինատների տեխնիկական ղեկավարներին՝ վերահսկողություն սահմանել ցեխերին տրված դիրեկտիվների կենսագործման նկատմամբ։

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԻՆԺԵՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Պատասխանատվության յենթարկել ցեխերի ու հանքահորերի վարիչներին՝ մեխանիզմների դիմաղբրկության ու չահագործման կանոնների խախտումներ թույլ տալու համար. մեխանիզմների պահպանման, կանոնավոր վիճակում դանվելու և նրանց անընդ-

մեջ աշխատանքի համար բանվորներին պարզևատրելու սխեմեն անտեսելու դեպքերի համար, հանցավորներին խիստ պատասխանատվության յենթարկել. պատասխանատվության յենթարկել նաև վորակական ու քանակական լավագույն ցուցանիշների համար ինժեներա-տեխնիկական աշխատողներին պարզևատրելու սխեմեմը չկիրառելու համար հանցավոր պատասխանատու անձնավորություններին։

բ) Առաջարկել ցեխային վարչություններին՝ ցեխի կուսակցական ու արհմիութենական ակտիվի հետ միասին՝ բանվորների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների մեջ մասսայականացնել պարզևատրումների սխեմեմի կիրառումը։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Ինժեներա-տեխնիկական աշխատողների աշխատավարձը կապակցել նրանց կատարած աշխատանքի տեխնիկա-արտադրական ցուցանիշների հետ։ Մեխանիզմների վատ աշխատանքի և աշխատանքի ցածր արտադրողականության համար, ինչեցնել համապատասխան վարչա-տեխնիկական անձնակազմի աշխատավարձը.

բ) առավելագույն չափով ծավալել բանվորներին ե՛լ ավելի լայն կերպով ուղղակի ու անսահմանափակ գործարքի մեջ ընդգրկելու աշխատանքը.

գ) կարգավորել բանվորների կատարած աշխատանքի հաշվառումը, մասնավորապես այն բանվորների, վորոնք անցել են պրոդրեսիվ գործարքի—բուրշչիկների, ամրացնողների (կրեպկաշչիկների) ու

վագոնետկա քշողների— Ալլահվերդու կոմբինատում և բուրշչիկներին ու վագոնետկա քշողներին Զանգեզուրի կոմբինատում.

դ) Աշխատավարձի ֆոնդերի սխալ ծախսման պատասխանատվությունը դնել անմիջականորեն հանքահորերի ու ցեխերի վարիչների վրա, իսկ ամբողջ կոմբինատում՝ կոմբինատների տեխնիկական ղեկավարների վրա:

ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Տասն որվա ընթացքում մշակել բոլոր մասնագիտությունների բանվորների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների վորակավորման բարձրացման պատրաստման և վերապատրաստման պլանները, և առաջին հերթին ձեռնարկել կոլպայմանագրի համաձայն կոմբինատների կողմից ստանձնված պարտավորությունների կատարմանը.

բ) կոմբինատների կուսակցական ու արհմիութենական ակտիվի հետ միասին, ուժեղացնել բանվորների մեջ կատարվող մասսայական-կուլտուրական և դաստիարակչական աշխատանքը.

գ) առաջարկել ցեխերի ու հանքահորերի ինժեներա-տեխնիկական աշխատողներին՝ ապահովել տեխնիկական ղեկավարությունն և գործնական ոգնությունը արտադրական պրակտիկա անցնող ֆաբզավուծուսի ու տեխնիկումի ուսանողների նկատմամբ.

դ) հատուկ լուրջ ուշադրություն նվիրել ֆաբզավուծուսներն ավարտողների վորակի ու պրոֆիլի խնդրին.

ե) հատուկ ուշադրություն նվիրել կոմբինատների ինժեներա-տեխնիկական աշխատողների վորակավորումը բարձրացնելու հարցերին.

զ) Լայնորեն ծավալել տեխպրոպագանդի ու տեխնիկայի տիրապետման աշխատանքները՝ այդ աշխատանքում ներգրավելով կոմբինատների վողջ հասարակայնությունը.

ը) առաջարկել կոմբինատների դիրեկտորներին՝ հինգ որվա ընթացքում իրական վերահսկողություն կազմակերպել դիրեկտիվների ու կոնկրետ առաջադրանքների կատարման նկատմամբ, այդ նպատակի համար առանձնացնելով 1, անպայման վորակյալ աշխատողի: Առաջարկել ցեխերի ու հանքահորերի վարիչներին՝ ամեն որ ստուգել ցեխում արված իրենց կարգադրությունների կատարումը, կոնկրետ ոգնություն ցույց տալով կարգադրությունները կատարողներին, իսկ կարգադրությունները չկատարողներին կամ դանդաղեցնողներին յենթարկել պատասխանատվության:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Առաջարկել կոմբինատների դիրեկտորներին՝ վերանայել բանմատակարարման ուղղությամբ կատարվող վողջ աշխատանքը, յենթարկելով այն կոմբինատների արտադրական պլանների կատարման խնդրին.

ա) անմիջապես կիրառել դիֆֆերենցիացիայի յենթարկված մատակարարումը, հատկապես առանձնացնելով առաջատար կատեգորիաներին (բուր-

չէիկներ, ստորգերկրյա բանվորներ, տաք ցեխեր, ինժեներա-տեխնիկական աշխատողներ).

բ) ապահովել հարվածայինների՝ վորպես արտադրության մեջ կենտրոնական դեմքի՝ գերազանց ապատարկումն ու մատակարարումը.

գ) անմիջապես հայտարարել անհատական մատակարարման նորմաները և խստորեն պահպանել այդ նորմաները.

դ) բարելավել ինժեներա-տեխնիկական աշխատողների ու նրանց ընտանիքների մատակարարումն՝ ապակենտրոնացված մթերումներից ու սեփական մթերային բազաներից այդ նպատակի համար առանձնացնելով հատուկ ֆոնդ:

ե) կազմակերպել ու կանոնավորել արտադրական խորհրդակցությունների աշխատանքը՝ մատակարարման աշխատանքների բոլոր բնագավառներում:

2. Մատակարարումը բարելավելու և խորհրդատեսությունները մասնագիտացնելու նպատակով, առաջարկել կոմբինատներին՝ իրենց հիմնական ուշադրությունը դարձնել բանջարաբուծությունն ու անասնաբուծությունը կազմակերպելու և զարգացնելու վրա, իսկ հացահատիկային կուլտուրաների ցանքը կատարել միմիայն խորհտնտեսությունների պահանջի սահմաններում: Հացահատիկային կուլտուրաներից ազատված և բանջարաբուծության համար պիտանի հողերն անպայման յուրացնել 1934 թվականի ընթացքում:

3. Պարտավորեցնել կոմբինատներին՝ ապահովել

ռանխատրակտան պայմանների սիստեմատիկ կիրառումը հաշվարաններում, խանութներում ու պահեստներում։

4. Առաջարկել մատակարարող կազմակերպություններին՝ մինչև հունվարի մեկը մարել բանվորների և ծառայողների աշխատավարձի ասպարիզում յեղած պարտքերը։

5. Խնդրել Գլավցվետմետին, Զակցվետմետի համար առանձնացնել՝

ա) շրջանառու միջոցներ— 1·000·000 ռուբլի այժմ և 500·000 ռուբլի 1934 թվականին.

բ) 1934 թվականի կապիտալ շինարարության համար՝ 500·000 ռուբլի.

գ) անասուններ ձեռք բերելու և արտելային բանջարաբուծություն կազմակերպելու նպատակով վարկեր բաց թողնելու համար՝ 200·000 ռուբլի։

6. Հանձնարարել Զակցվետմետին՝ անմիջապես բարելավել մատակարարման վողջ սիստեմի հաշվառումը, հաշվետվությունն ու պլանավորումը, ուժեղացնել ներքին հնարավորությունների հավաքագրումը, ծավալել ապակենտրոնացված մթերումները և մանրածախ առևտուրն ապահովել ապրանքների ասորտիմենտով։

Առաջարկել Կենտկոմի կադրերի բաժնին՝ տրեստի հետ միասին վերանայել աշխատող կադրերի՝ հատկապես խորհրդանտեսություններում աշխատողների կադրերը, ապահովել ագրոտեխնիկական ձեռնարկումների կիրառումը խորհրդանտեսություններում. մինչև 1934 թվականի վերջը ամիսն ավարտել խորհրդան-

տեսությունների արդիֆինպլանները կազմելու աշխատանքը։

Առաջարկել տրեստին՝ խորհտնտեսություններն ապահովել անհրաժեշտ շրջանառու միջոցներով և 1934 թվականի հունվարի 1-ից խորհտնտեսություններն անցկացնել լիակատար տնտհաշվարքի։

7. Անմիջապես կազմակերպել մանկական սնունդի մատակարարման գործը, վորի համար առաջարկել Հայաստանի Մատժողկոմատին՝ առանձնացնել համապատասխան ֆոնդեր։ Մինչ այդ ֆոնդերն ստանալը, մանկական սնունդն ապահովել խորհտնտեսությունների մթերքներից կատարված ապակենտրոնացված մթերումների հաշվին։

8. Առաջարկել Հայաստանի Մատժողկոմատին վերջ տալ բանվորների մատակարարման, միութենական Մատժողկոմատի կողմից հաստատված նորմաների (ֆոնդերի) կրճատման պրակտիկային, նաև հանձնարարել Հայաստանի Մատժողկոմատին հետևել և ոգնել կոմբինատներին առանձնացված ֆոնդերը ստանալու գործում։

9. Հանձնարարել Արդժողկոմատին՝ հետազոտել անասունների սատկելու, հափշտակման գոյություն ունեցող դեպքերը և պատասխանատվության յենթարկել հանցավորներին՝ տեղերում կազմակերպելով ցուցադրական դատեր։

10. Նկատի ունենալով, վոր գույքի հանձնումը Ղափանի բան. մատակարարման բաժնում կատարվել է վոչ ըստ Միութենական ԺողկոմխորհԻ հրա-

հանդի, հանձնարարել ընկ. Ցերգնկյանին պարզելու այս խնդիրը և միջոցներ ձեռք առնելու։

ՀԿ(բ)Կ Կենտկոմն ու ՀՍԽՀ Ժողկոմխորհն անհրաժեշտ են համարում ամրացնել Զակցվեստեռնը, ապահովել Հայաստանի կուսակցական, տնտեսական ու խորհրդային կազմակերպությունների կողմից նրան հարկ եղած ոժանդակություն ցույց տալը՝ Անդրկովկասի գունավոր մետաղարդյունաբերության ղեկավարությունը համապատասխան բարձրության վրա դնելու նպատակով։

Առաջարկել ՀԱՄԽ-ին՝ ընկ. Հանեսողլյանին՝ Հայաստանի պղնձարդյունաբերական ձեռնարկություններից ինքնադլուխ կերպով հեռացած և Ցերեվանի դանդաղ կազմակերպություններում տեղավորված բոլոր տեխնիկներին Զակցվեստեռի կողմից ներկայացված ցուցակի համաձայն մեկ ամսվա ընթացքում հետ վերադարձնել իրենց տեղերը։

Ալավերդու պղնձարդյունաբերական ու քիմիական ձեռնարկություններում միասնական ղեկավարություն ստեղծելու և այդ երկու ձեռնարկությունների աշխատանքի միջև լավագույն կապ հաստատելու նպատակով, անհրաժեշտ համարել Ալավերդու քիմիական ձեռնարկությունները հանձնել Ալավերդու պղնձի կոմբինատի իրավասությանը, այդ կոմբինատը վերակառուցել և դարձնել Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատ, այդ մասին հարց հարուցելով ՀԱՄԿ(բ)Կ Անդրյերկոմի ու Անդրժողկոմխորհի առաջ։

Խնդրել ընկ. Որջոնիկիձեյին, հատուկ հրաման հրապարակել Զակցվեստեռի ձեռնարկությունների

սարքավորման ու տեխնիկական մատակարարման առարկաների պատրաստումը և փոխադրումն արտադրելու մասին։

Հաշվի առնելով Հայաստանի պղնձարդյունաբերության ունեցած հսկայական նշանակությունը Խորհրդային Միությանը՝ մեր ժողովրդական տնտեսության մեջ այնքան դեֆիցիտային հանդիսացող՝ պղնձով ապահովելու գործում, ՀԿ(բ)Կ Կենտկոմն ու Հայաստանի ԺողԿոմխորհը պարտավորեցնում են բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական, կոմսերիտական ու արհմիութենական կազմակերպություններին՝ իրենց վողջ աշխատանքը վերևից մինչև ներքև վերակառուցել պղնձարդյունաբերության արտադրական առաջադրանքների 100 տոկոսային կատարման և լեռնա-հետախուզական ու կապիտալ աշխատանքների առավելագույն արագացման տեսանկյունով։

Հանձնարարել ընկ. Գալոյանին պմիսը մեկ անգամ զեկուցումներ լսել՝ այս վորոշումները Հայաստանի բոլոր կազմակերպությունների կողմից կատարելու մասին և անհրաժեշտ դեպքերում առաջացած հարցերը դնել ՀԿ(բ)Կ Կենտկոմի ու ԺողԿոմխորհի առաջ։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար՝
Ա. ԽԱՆԶԱՆ

ՀՍԽՀ ԺողԿոմխորհի նախագահ՝
Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում է այս վորոշումը մանրամասն քննության յենթարկել Ղափանի, Ալլահվերդու և Մեղրու շրջանների առաջիկա շրջանային կուսկոնֆերանսներում, նաև Ալլահվերդու և Ղափանի կոմբինատների և Սադարակի հանքերի ընդհանուր ու ցեխային կուսակցական ժողովներում, բանվորների ընդհանուր ժողովներում, արտադրական խորհրդակցություններում և ինժեներա – տեխնիկական աշխատողների ժողովներում, ապահովելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Հայաստանի ժողկոմխորհի ներկա վորոշման լիակատար իրագործումը։



[254]

669.3(47.92)
Z-24

S 44
Opp.2m.4

ms/70

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0007607

A II 19810